ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ստեփանավան քաղաքի (Հայաստանի Հանրապետություն) և Բրասլավի շրջանային գործադիր կոմիտեի (Բելառուսի Հանրապետություն) եղբայրացման

05 հոկտեմբերի 2012թ. ք. Ստեփանավան

Մեծ նշանակություն տալով միջազգային, տնտեսական և մշակութային կապերի զարգացմանը և ազգերի միջև վստահության, փոխհամաձայնության ու բարեկամության ամրապնդմանը՝ Ստեփանավան քաղաքը, ի դեմս քաղաքապետ Սարգիս Մինասի Ղարաքեշիշյանը, և Բրասլավի շրջանային գործադիր կոմիտեն, ի դեմս Բրասլավի շրջանային գործադիր կոմիտեի նախագահ Սերգեյ Նիկոլաևիչ Շմատովը կնքեցին

Ստեփանավան քաղաքի (Հայաստանի Հանրապետություն) և Բրասլավի շրջանային գործադիր կոմիտեի (Բելառուսի Հանրապետություն) եղբայրացման սույն պայմանագիրը:

Կողմերն իրենց իրավասության սահմաններում հավասարության ու համագործակցության հիման վրա Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության օրենսդրության համապատասխան պետք է նպաստեն.

-երկկողմանի տնտեսական, գիտատեխնիկական, մշակութային և հումանիտար համագործակցության կայացմանը ու ընդարձակմանը,

- բոլոր տիպի սեփականության տնտեսվարող սուբյեկտների միջև անմիջական կապերի կնքման համար պայմանների ստեղծմանը,

- գիտության, կրթության, մշակույթի, սպորտի, տեղեկատվության ոլորտներում համագործակցությանը,

- ներդրումային և նորարարական գործունեության զարգացմանը,

-ուսումնական հաստատությունների, մշակութային և սպորտային հիմնարկությունների, թատրոնների և թանգարանների, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների միջև անմիջական կապերի ստեղծմանն ու զարգացմանը,

- տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև գործունեության տարբեր ոլորտների մասնագետների միջև փորձի փոխանակմանը,

- կողմերի միջև համաձայնեցված համագործակցության այլ ձևերին:

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքելու պահից և գործում է անժամկետ:

Պայմանագիրը կազմված է հայերեն և ռուսերեն՝ օրինակներից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմի համար երկուական օրինակ:

Ստեփանավան քաղաքի կողմից (Հայաստանի Հանրապետություն)	Բրասլավի շրջանային գործադիր կոմիտեի կողմից (Բելառուսի Հանրապետություն)
Ստեփանավան քաղաքի քաղաքապետ Ս.Մ.Ղարաքեշիշյան	Բրասլավի շրջանային գործադիր կոմիտեի նախագահ Ս.Ն.Շմատով